

НАШИ ЮБИЛЯРЫ

**ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
(ծննդյան 70-ամյակի առթիվ)**

Սույն թվականի հունիսի 10-ին լրացավ հայագիտության բնագավառում զգալի վաստակի տեր, երկարամյա դասախոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Սարգսյանի ծննդյան 70-ամյա հոբելյանը: Գերազանցությամբ ավարտելով ՀՀ Մարտունու շրջանի Չոլաքարի թիվ 1 միջնակարգ դպրոցը, Սուրեն Սարգսյանն ընդունվել է ԵՊՀ-ի Իրավաբանական ֆակուլտետը, սակայն ճակատագրի բերումով կիսատ է թողել ուսումը: 1988 թ., գերազանցությամբ ավարտելով ԵՊՀ-ի Պատմության ֆակուլտետը, ընդունվել է ՀՀ ԳԱԱ ասպիրանտուրան: 1991 թ.-ից աշխատում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում՝ սկզբում որպես կրտսեր, հետո՝ ավագ, ապա՝ առաջատար գիտաշխատող: 1997-ից դասավանդում է Երևանի մի շարք ԲՈՒՀ-երում: Պատմական գիտությունների դոկտոր է (2016), պրոֆեսոր (2018):



Ս. Սարգսյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում են արևմտահայ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունը, հայ մամուլի պատմությունը, հայ քաղաքական կուսակցությունների պատմությունը, ազատագրական պայքարի նվիրյալները և ժամանակակից կարևոր իրադարձությունները: Նա ակտիվորեն մասնակցում է նաև միջազգային ու հանրապետական գիտաժողովների, հանդես գալիս գիտական նորություններ պարունակող և հիմնախնդիրներ պարզաբանող զեկուցումներով, որոնք արժանանում են բարձր գնահատանքի:



Պատմաբանը հաղթել է ՀՀ ԿԳՆ-ի հայտարարած «Ամենաարդյունավետ գիտնական» մրցույթում: 2018 թ., ապա նաև 2019 թ. ճանաչվել է լավագույն հայագետ: 2018 թ. ընտրվել է Գիտության Պետական կոմիտեի թեմատիկ ֆինասավորման և գիտության բնագավառում մրցանակներ շնորհող հանրապետական մրցույթային հանձնաժողովի նախագահ: Գիտահետազոտական աշխատանքին զուգընթաց նա նաև մեր՝ «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական միջազգային հանդեսի գիտական խմբագիրն է և խմբագրականների անփոփոխ հեղինակը:

Երկարամյա անբասիր աշխատանքի համար նա պարգևատրվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Ոսկե», Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված հոբելյանական մեդալներով, «Գլաձոր» համալսարանի «Ոսկե հուշամեդալով», ՀՀ ԳԱԱ երկու շնորհակալագրերով, ՀՀ ԳԱԱ Վաստակագրով և այլ պարգևներով:

Շնորհավորելով նշանակալի վաստակի տեր պատմաբան, ազնիվ ու անաչառ մտքի տեր, համարձակ ու սկզբունքային քաղաքացի, լավ ընկեր, պրոֆեսոր Սուրեն Սարգսյանին ծննդյան 70-ամյա հոբելյանի առթիվ՝ նրան մաղթում ենք գիտական նորանոր ձեռքբերումներ՝ ի շահ հայ պատմագիտության: